Պարույր Սևակ

Լուսնահար կարոտ

Սկսվում է գիշերն արդեն:
Եվ աստղերը,
Որ ողջ ցերեկ խոր քուն մտան,
Հիմա իրենց ճառագայթե
Սուր փշերն են ոգնու նման նորից ցցում՝
Ընդդեմ մթան:
Եվ անպաշտպան իմ կարոտը,
Որ անցել է խոր ընդհատակ
Ու չի ուզում նորից տրվել շղթաների ու կապանքի,
Իմ կարոտը մատնվում է քո անունից.
Լրտեսի՛ պես նա մատնում է տառապանքին:
Մեծ քաղաքը լեթարգիական քուն է մտնում,
Իսկ ես՝
լուսնո՛տ,
Ես՝
լուսնահա՛ր,
Շեղ-սայթաքուն կտուրներով
Ու քիվերով ատամնաբաց,
Մինչև անգամ շանթարգելով,
Ահա նորից քեզ եմ գալիս՝
Կյանքիս կրկին վտանգելով:

Եթե հանկարծ դու քո հեռվից նկատեիր
Ու ձայն տայիր՝
Ճչալու պես «ա՜խ» անելով՝
Իմ վտանգված կյանքի համար վախենալով,
Գիտե՜ս՝ ինչո՛վ կվերջանար,
Իմ ցանկալի՜ս:
Գիտե՛ս.
Մահո՜վ է վերջանում,
Երբ լուսնոտին ձայն են տալիս:
Բայց ես բնա՜վ երկյուղ չունեմ,
Թե կընկնեմ ցած
Եվ իմ արյամբ հալեցնելով ձյունը մայթում՝
Դոնապանին գեթ կազատեմ ձյուն քերելուց:
Այդ չի՛ լինի,
Որովհետև ձայն չե՜ս տա դու,
Եվ դա-
ո՛չ թե բարությունից,
Այլ... պարզապես չսիրելո՜ւց...
. . . . . .

22.III.1959թ.
Մոսկվա